ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
"24" հուլիսի 2026թ. N 1855-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 17 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 20-ի թիվ 17 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

24.07.2026

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
ՍԻՄՈՆՅԱՆ

Подписано: SIMONYAN ARMEN 4003890647

Ա.

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

20.07.2026թ. ք. Երևան

2026թ. հուլիսի 20-ին ժամը 11:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը

<u>Օրակարգում՝</u>

1. «Փամբակ Կումունալ» ՀՈԱԿ-ի «Դսեղ-Վանաձոր» թիվ 05-001 երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու գրությունը:
2. «Կարեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Արթիկ-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու գրությունը:

<u>Քննարկվեց</u>

1. «Փամբակ Կումունալ» ՀՈԱԿ-ի «Դսեղ-Վանաձոր» թիվ 05-001 երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու հարցը:

2. «Կարեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Արթիկ-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 երթուղին նոր ավտոտրանսպորտային միջոցով համալրելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

1. Թույլատրել «Փամբակ Կումունալ» ՀՈԱԿ-ին «Դսեղ-Վանաձոր» թիվ 05-001 երթուղին համալրել «Ջաք» մակնիշի 442 HU 61 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով:
2. Թույլատրել «Կարեն» ՍՊ ընկերությանը «Գյումրի-Արթիկ-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 երթուղին համալրել «Գազ Լուիդոր 225000» մակնիշի 739 HU 61 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան